ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

N ՀՀ ՆԳՆ Ո ՀՄԱԾՁԲ-2023-ԱՊՊԱ/L-66
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

<<21>>. <<07>>. 2023թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա.Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Ա. Մելքոնյանի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 13.07.2023թ.-ին կնքված ՀՀ ՆԳՆ Ո ՀՄԱԾՁԲ-2023-ԱՊՊԱ/L-66 ծածկագրով գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին ՀՀ ՆԳՆ Ո ՀՄԱԾՁԲ-2023-ԱՊՊԱ/L-66 ծածկագրով պայմանագրի 4.1 կետով սահմանված 5 600 000 (հինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի վճարումը, որը Պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**ք.Երևան, Արամի 3,5**
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ**
Հ/Հ 900011021947	**Հ/Հ 163008157113**
ՀՎՀՀ 01533334	**ՀՎՀՀ 02551341**
հեռ. 010 59-60-21	**Էլ. Փոստ: info@silinsurance.am**
էլ. հասցեն՝ police_gnumner@police.am	**Հեռ. /060/ 540000**
Ա. Ֆիդանյան	**Ա. Մելքոնյան**
/ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/	**/Գործադիր տնօրեն/**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված N 1
<<21>> 07. 2023թ.
ՀՀ ՆԳՆ Ո ՀՄԱԾՁԲ-2023-ԱՊՊԱ/L-66 *ծածկագրով*
գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

Վճարման ժամանակացույց

| Ծառայություն | | |